

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Փառափառական, Գիտական


52<sup>րդ</sup> ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 25

21 ՅՈՒՆԻՍ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հառաւոր դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդները կը սկսին աշնան սկիզբէն: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ, պէտք է իսկոյն իմացնեն իմ կուրիւնները նկատողութեան չի



Ձի հրատարակուած ձեռագիրները ոտ չստ դարձուիր: ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռն-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعالمده غلامده (ماسيس) غزتي ادارتي

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դաղաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

## ՆՅԱՆԱԿԱՆ ՄԵԼԵՔ

Ընդհանուր վիճակի կան որոնք այս աշխարհածանոթ ղեղով կատարելապես կը բժշկուին:



## SCOTT'S EMULSION

Հաշ, հարբուխ, և բոլոր որկորի և թորի վիճակի ինչպէս լոգացում, և սրտնշիտ, շնչառութեան և կուրծքի երակներուն փորփոգումը և միւս տկարութիւնն պատճառող անհանգստութիւններն՝ անմիջապէս կը զսպուին, և կը տկարացուին և վերջապէս կը բժշկուին: Կտան նաւնոց ծիւրական օխտի նկատմամբ՝ առաջին նշաններն տեսնուած ատեն, անմիջապէս ատալը կ'առնէ: Եւ ընտանիքի մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք ղեղարան մը ղիմել և

## ԸՍԳՈԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

մը առնել: Ըսգոթի Բողաղրութիւնը այս աղետը կը դադրեցնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականգնէ:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

19

Բոլոր բեղաճանցները և բեղաճանցները իր ծախսին:

## ԱՊԱՆՈՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

## ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

### ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան և թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ զաւաղաններ եւ այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչայ Եռական, Մեծ-Վտղոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ դնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւս կ'առնուին: Իսկ ապառիկ զննողներէն՝ 100ին 15 զեղչով:

Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն զննու պէտք ունեցողները կրնան դիմել Կամուրջին գլուխը լրագրավաճառ Միսաք աղային:

## ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կրանք թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրանցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԻԱՆԻ՝ Չինաստանէն, Հնդկաստանէն, Ճապոնէն և Սլլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեհ և առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր, Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



# LA CONFIANCE



## ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՂԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդրոյին ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիդի՝ Սթերա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւ այլն թատրոնները, նաեւ Պօստոյի, Թուլուզի, Լիօնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառաինիէռի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հաւլը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրաուէներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնադրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիդի Առեւտրական Սենեակին եւ այլն:

Ընկերութեան դրամատուոնն է Քիէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար. Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հաւցե. — Պօլիս, Մահմուտ փաշա, Պէօլիւք Երլտըզ խան, Թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը Էղոզ անբիւի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաթազաբլար, Թիւ 46, ուր գաւառներէն առեւծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

# ՃԱՐՈՆԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ

Մեծ փողոց Բերայի Թիւ 186

## ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՕՆ

ՃԱՐՈՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՍՆԵՐՈՒ ՄԵՏԱՌՍԵՂԷՆ ՈՒ ԲԱՄՊԱԿԵՂԷՆ

Ք. ՆԱՐԱՄԻՒՐԱ ԵՒ ԸՆԿ. Վաճառատունը պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան եւ իր բաղժաթիւ յաճախորդներուն թէ մեծ քանակութեամբ ծաքոնական կերպասեղէններ բերել տուած է, վերջին նորաձեւութեանց համաձայն, վայելուչ եւ տոկուն:

Այս կերպասեղէնները օղուցադրուած են ծաքոնական վաճառատունը, Մեծ փողոց Բերայի, Թ. 186, ուր այցելողները պիտի զնահատեն անոնց տեսակին՝ ընտրութիւնը ու աղնուութիւնը, միեւնոյն ատեն օգտուելով բացառիկ կերպով զեղչուած գիներէն, լիքիփասիօնի առթիւ:

ԼԻՔԻՏԱՍԻՕՆԻ ՊԻՏԻ ՏՆԵԼԷ

Յունիս 9/22էն մինչեւ 2/15 Օգոստոս 1903

# ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

— — —

Դաւթեան Դարձակալութիւնը որոշած ըլլալով նոր զարկ մը տալ հրատարակական ճիւղին՝ հրաւեր կը կարդայ մեծաւոր հեղինակներուն օրպէս զի իրենց գրական երկերը փութան ներկայացնել Դորձակալութեան:

Հրատարակելի գիրքերուն ձեռագիրը երեք օրինակ ըլլալու է՝ Մէարիֆի օրէնքով: Դորձակալութիւնը կը ստանձնէ գիրքերու վաւերացման, տպագրութեան, փորձերու սրբագրութեան կազմի, եւ այլ աշխատութիւնները:

Կը կատարէ նաեւ տպագրական ամէն տեսակ գործեր, այցեստոմս, շրջաբերական, նամակագրուիլ, ազդեր, դպրոցական բալետիլ, պատուանիլ, վիճակացոյց, վկայագիր, հաշուեգիր, եւ այլն եւ այլն:

Դիմել առ ՄԱՐԱՏ ԴԱԻԹԵԱՆ

ԽՈՐԱՍԱՆԳՆԱՆ ԽԱՆԸ, ՍԻՐԷՏԵՐ, Կ. ՊՈԼԻՍ

2-5

# ՄԱՍԻՆ

52<sup>րդ</sup> ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 25

21 ՅՈՒՆԻՍ 1903

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու մի անձնաստան (հմբագրական) Տ. Ա. — ձախասագրային տամներ. Ջաւկին խեղ-  
քը. Չիֆթէ-ՍՍՐԱՅ : — Բանաստեղծութիւններ. Բանաստեղծը. Վ. ՄԱԼԷՋԵԱՆ. — Թախիծ.  
ՎԱՐԴԴԵՍ : — Ազգագրական. Ապօրէն սերերը. Ս. ԴԱԽԵԱՆ : — Ժողովրդային բժշկութիւն.  
Բնկոյզ եւ աղփախին միսը. ՏՕԲԹ. Մ. Բ. ԻԽԻԻՃԵԱՆ : — Կնոջական դեմքեր. Ռօզմօն  
Ժեռար. Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

## ԵՐԿՈՒՔՆ ԱԼ ԱՆՁՆԱՍՊԱՆ

Երկու Հայեր, ծերունի մը ու երիտասարդ  
մը, անձնաստան եղան, — մէկը՝ Առաքել Ծա-  
տուրեանց, մեծահարուստ նաւթատէրը, ու-  
րովհետեւ իր ահագին ստացուածքէն երկու  
միլիոն բուլղարի աննշան գումար մը միայն  
մնացած էր իրեն և միւսը՝ Գէորգ Գա-  
լիամաճեան՝ աղքատ արուեստագէտը, որով-  
հետեւ գործերը անյաջող կերթային և թեր-  
եւս վրձինը չէր հայթայթեր իր ապրուստը :  
Կեանքի հեգնութիւնները ու հակադրու-  
թիւնները, քիչ անգամ այնքան բիրտ կերպով  
կը ցցուին իրարու դէմ, միեւնոյն համայնքին  
պատկանող երկու անձերու վրայ, — թէեւ հե-  
ռաւոր միջավայրերու և տարբեր դիրքերու  
մէջ գտնուին անոնք, — որքան այս կրկնակ  
անձնաստանութեան պարագային :

Առաքել Ծատուրեանց, իր պատանեկու-  
թեանը՝ տնական սպասաւոր է եղեր, յետոյ  
բանոր, որմնադիր, մինչեւ այն վայրկեանը  
ուր բաղդը յանկարծ կը ժպտի իրեն՝ Պագու-  
մէջ, նաւթահորերու ժայթքումով, ու կը  
սկսի պարգեւել յարածուն հարստութիւն մը  
որ մէկ ու կէս միլիոն անգլ. ոսկի հնչուն  
դրամէն զատ՝ կը թողուր ահագին կալուած-  
ներ, Բարեախրտ ու առատաձեռն ծերունին  
աննշալի շահած էր ու աննշալի կը ծախ-  
սէր, օրին մէկը, մեծկակ պարտքերու եւ-

թարկուած դտաւ ինքզինքը և սխալի-  
ցաւ. կրնար վճարել զանոնք՝ իր ունեցած-  
ներուն մէկ մասէն զրկուելով. բայց լաւա-  
գոյն սեպից կեանքին վերջ տալ՝ ընկերային  
սանդուխին այն աստիճանին վրայ ուր կը  
գտնուէր, քան թէ քանի մը ոտք իջնել ու  
ապրիլ : Դառն էր իրեն համար վերջուշումը  
ունենալ պատանեկութեան օրերուն, — իր  
գործաւորի վիճակին, — որուն բաղդատմամբ  
նորէն պերճ կեանք մըն էր զոր պիտի վա-  
րէր՝ պարտքերը հատուցանելով ու մնա-  
ցածովը գոհանալով :

Ատրճանակի հարուած մը վերջ տուաւ իր  
հոգեկան տագնապին :

Գէորգ Գալիամաճեան, քիչ շատ բարե-  
կեցիկ ընտանիքի մը զաւակ, Ծատուրեանցին  
բոլորովին ներշափ սկզբնաւորութիւն մը ու-  
նեցած էր. դպրոց դացած, դաստիարակու-  
թիւն ստացած, յետոյ Գեղարուեստից Վար-  
ժարանին շրջանը բոլորած, իր առգիստի հա-  
կունքներուն ու ճաշակներուն կատարելապէս  
գոհացում տալու համար՝ քանի մը տարի ալ  
զնայ շրջեցաւ եւրոպական ուստանները, ու-  
սումնասիրութիւններ կատարեց միւղէներուն  
մէջ, արուեստը կատարելագործեց, բայց  
միշտ նիւթական անձկութիւններով, հեւ ի  
հեւ մաքսուումներով : Իրբեւ պարզ արհես-

տաւոր մը, թերեւս հանգիստ կեանք մը ապահովէր իրեն. բայց լայն իտէալներ ունէր, արուեստագէտի, բանաստեղծի ոսկի երազներ քրոնց ո'չ մէկը իրականացաւ:

Ինքն ալ, օրին մէկը, յուսահատութեան ծայրը հասած գտաւ ինքզինքը, — թէեւ Նատուրեանցէն բոլորովին տարբեր պայմաններու մէջ, — ու վերջ տուաւ կեանքին:

Ինչ բաժի ծառայեցին ուրեմն մէկուն ահագին հարստութիւնը և միւսին տաժանազին աշխատութիւնը՝ եթէ երկուքն ալ միեւնոյն եզերական վախճանին պիտի յանդէս:

«Այս է եղեր կեանքը» մտածեցին թերեւս երկուքն ալ, գերագոյն վայրկեանին մօտ, Ծառուրեանցը՝ իր միլիոններուն վրայ մտածելով ու Գաիամաճեանը՝ իր դատարկ թըղթապանակին վրայ: Մէկը իր ետին կը թողուր փառաւոր անցեալ մը ու միւսը կ'ընդհմարէր խոստովանից ապագայ մը: Բաղդին մէկ տըլուր քմահաճոյքը խորսակեց այդ անցեալը, իր բեղմնաւորութեանը մէջտեղ, ու չիրականացուց այս ապագան՝ որ այլեւս հասած պէտք էր ըլլար:

«Յամառ աշխատութիւնը ամէն բանի կը յաղթէ» — կը քարոզէն մեզի: Երկտասարդ արուեստագէտը զո՞հ մը եղաւ այս սկզբունքին որ չիրականացաւ իր անձին վրայ: «Առանց բաղդին օգնութեան կարելի չէ յաջողիլ» — կը քարոզէն դարձեալ մեզի: Մեծահարուստ ծերունին ինքն ալ զո՞հ մը եղաւ այս սկզբունքին որ չիրականացաւ իր անձին վրայ, թէեւ բաղդը գերազանցապէս ժպտած էր իրեն:

Կերեւայ թէ ամէն ատեն ճիշդ չեն իմաստուններուն axiomaները ու խելացի հռչակուած խօսքերը:

Ինչ որ, սակայն, ցայտուն կերպով երեւան եկաւ այս եզերական կրկնակ պարագաներուն մէջ, արժանապատուութեան զգացումի այն գերազանց ըմբռնումն է որուն զո՞հ գացին երկուքն ալ:

Ծառուրեանց չթափաքեցաւ բան մը պակսեցնել իր մեծահարուստ անձի ղրիքէն, և Գաիամաճեան մինչեւ վերջը պահպանել ուղեց իր աղքատ արուեստագէտի հպարտութիւնը:

Կեանքի այս բարձր ըմբռնումը՝ ամէնէն տխուր վախճանին հասցուց երկուքն ալ: Անոնց մահը իմանալով, թերեւս գտնուեցան հարուստ եր որոնք մտածեցին. «Մարդ մը որ դեռ երկու միլիոն բուլլի ունի՝ ինչպէ՞ս կը յուսահատի և կ'որոշէ անձնասպան ըլլալ»: և աղքատ արուեստագէտներ որոնք ըսին իւրովի. «Միթէ մենք ալ մեր զրկանքները, մեր մաքառումները չուրի՞նք. ասոր համար պէտք է որ հրաժեշտ տանք կեանքին»: Ու ծայրայեղ զգայնատուութեան վերադրեցին երկու կամովին մահերը:

Ո՛վ իրաւունք ունէր. այսպէս մտածողները թէ անձնասպանները...

8. Ա.

## ԲԱՆԱՍՏԵՂԸ

Իր աչիքեր իսկային յառեկեմ,  
Ու՛ ամբոխին մէջ որ կ'երթայ միս միմակ,  
Կ'երգէ յոյգեք զոր դարերը կը կըրկենեմ,  
Պաշտելով միշտ իր մուսան՝ կից շարունակ:

Ո՛հ, արդարեւ, ամենեքիս ալ, կուրօրեմ  
Կը սիրենք ձեզ, ո՛վ կիցեր, եւ տխուրեմ  
Մեր երգերը միայն ձեզի համար են.  
Ձեզի՛ մուսայ, հուրի. կո՛ւռք եւ հրեշտակ:

Մոմն ինչպէս յար կըսպառի սուրբ Տիրամօր  
Պաշտելին մօտ, մեր սիրտն այնպէս — հե՛հ  
բուրվառ —  
Կը մըխայ միշտ, մեր սիրտը միշտ վիրաւոր:

Բայց այդ երգերն ու սեր ձեզի չեն ազդեր.  
Դուք քերթող չեք հասկընար... մինչ ձեր  
սեր  
Կըսպանցե՛ ան, ան, կըսպանցե՛ ան-  
պասնառ:

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

## ՀԱՎԱՏԱԳՐԱՅԻՆ ՏՈՒՄՆԵՐ

### ՋԱԿԿԻՆ ԽԵՆԹԸ

#### Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆԻՆ

Իր կլինը երկու տարի է որ Հիւանդանոցն էր: Խենթ էր: «Ջալիի խենթ» ինչպէս կը փոփալին իր շուրջը, բժիշկներէն մինչեւ միս հիւանդները, խենթերը: Եւ այդ երկու տարիին մէջ, ոչ մէկ բարւոքում կարելի եղեր էր տեսնալ անոր վիճակին մէջ: Ընդհակառակը: Կը մերժէր անունդ առնել և օր օրի դժուր կերպով ծիւրելու վրայ էր: Պիտի մեռնէր:

Պաղտիկ առջի մէկ օրէն, երկու տարի անընդհատ, ամէն երկուշաբթի կանոնաւորապէս Հիւանդանոց կերթար իր կլինը տեսնալու, ամէն անգամուն, դռնէ պղտիկ տարբերութիւն մը, բարեկաւում մը գտնալու պատրանքոտ երազովը պարուրուած և ամէն անգամուն ալ գրեթէ միեւնոյն յուսախաբ վերադարձին տրտմութենէն ընկճուած:

Իր ամէն երեւալուն՝ Մաքրիկ կը ճանչնար զինքը առջի բերան, վայրկեանի մը համար, և կուգար բերնէն ամուսնական իրենց սովորական համբոյրը փրցնելու: «Խնտոր ես, Պաղտիկ, աղէ՛կ ես...» մը թոցնելով, որուն, «Աղէ՛կ, դո՛ւն ինտոր ես» ին ժամանակ չի ձգելով կը փախչէր կերթար, յանկարծ կանգ առնելու համար միւս յիմարուհիներուն մէջ տեղը որոնք ապուշ ապուշ կը խնդային իր վրայ և ինքն ալ իր կարգին կը սկսէր ծիծաղիլ լիարերան ու ծաղրել ներս մանող անցանցօրը, որուն հոտ՝ կանանց բաժինին մէջ ներկայութիւնը անբացատրելի կը դնուէր: Եւ իր քովի խենթ կնիկներուն դառնայով:

— Բուկին մէկ բա՞նդ է, քուկին մէկ մա՞րդդ է, կը հարցնէր ասոր անոր:

Եւ Պաղտիկ մօտենալով.

— Ես եմ, քու Պաղտիկդ, զիս չե՞ս յիշեր, քու Պաղտիկդ, ինչո՞ւ կը մոռնաս կոր, հոգի... Կ'ըսէր, երբ միւս կլիները կը խնդային արցունք բերելու չափ կոկորդալիլ

քահնանքներով, որոնք իրենց փորին փարթը կը վերվարէին և դլուխի ծանր ու միօրինակ տատանումներով և այդ օտարական էրիկ մարդէն վախնալու ու ամչնալու կեղծ երեւոյթներով կը ժողուըտուէին, կը քաշուէին, կերթային յարակից սենեակ մը ուր յիմար կնկան մէկը թուղթ բանալու վրայ էր, և լսուելու չափ բարձր ձայներով կրկնելով իրարու.

— Խենթ են, էրիկ կնիկ խենթ են, երկու խենթ իրար կըտան...

Եւ Պաղտիկ կը նստեցնէր զայն գրեթէ բռնի, սեւի վրայ ճերմակ ծաղիկներով պատմայէ սէտիբին վրայ որ դադաղի ծածկոցի մը երեւոյթը կ'առնէր այդպէսով, և լեցուն սիրտով երեսը կը նայէր: Բոլորովին փոխուած էր հիմա ան և գրեթէ անճանաչ դարձած: Չի սանտրուած մազեր ոլոր ոլոր կը դիւղուէին, կը բարձրանային, կը կարկառէին սլուտտակներու պէս ձիգ ու դարձդարձիկ: Ծակատին ճիշդ մէջտեղէն ուղիղ դիւ մը դարձեր, դէպ ի ետեւ կ'երկարէր բնականօրէն, առանց ճիգի և հաւասարապէս երկուքի կը ճեղքէր մազերուն առատ փունջը որուն մէկ կողմը — դլուխին հիւանդ մասը ապահովաբար — ճեղմեցնում, — հակառակ քսանը ետքը տարու ըլլալուն, — վրիւրի մը պէս կը ժայթքէր և միւս կողմը սեփ սեւ, եփեհոտի պէս, կը հակադրուէր, ինքն ալ իր կարգին ներդաշնակութիւն մը կաղմելու համար բարձին վրայի սեւ ու ճերմակ ծածկոցին հետ որուն վրայ կ'իյնար հիմա անոր յոգնած դլուխը:

Մորթը մազաղաթի չորութիւնը ու անփայլութիւնը հագեր էր հիմա, որուն վրայ՝ քաշուած ու անհատնումօրէն փոթփոթած զիմաղիմներ կ'երակաւորուէին և երեսներուն քաշուըտուըկած միսերուն մէջէն դուրս կը պոռթկար ակռաներու ամբողջ ու փայլուն շարք մը որուն երկու ծայրերէն, անկապ ու անսկզբ խօսքերով հետ դուրս թափող թուքի փրփուրներ կը վժվժային:

Հիմա լուռ կը մնար ինք և պաղած նայուածքով մը կը հետեւէր անոր ամէն մէկ շարժումներին, ամէն մէկ բացադաշնակութեան ու արտառոցութիւններուն, սպասելով որ

յողնի քիչ մը, ձանձրանայ եւ թափը կտրի՝ անդուռ ու անխմած ափն խօսակցութեան որուն տղայական ու կցկտուր դարձուածնե-  
րուն ու կրկնութիւններուն մէջը կը մտնորէր։ Ներսէն դուրսէն կը խօսէր։ Իր անձնական, աղջիկութեան, ամուսնական կեանքէն, հիւ-  
ւանդանոցի կեանքէն կը պատմէր, փէշը պո-  
չը իրար չի բռնած բաներ կը պատմէր։

Ու վայրկեանը մէյ մը կ'անդարադառնար իր դաւիկին, քորջերէ շինուած գոյնզգոյն խոշորէկ պէպէք մը զոր կառէր, կը վեր-  
ցընէր բազմոցին վրայէն, կը զրկէր կը պազ-  
նէր, կաթ տալու ձեւեր կ'ընէր, հառած պարպուած ծիծ մը հանելով դուրս, որ պա-  
րապ ձեռնոցի մը պէս կը կախուէր քորջէ պէպէքին երեսին։ Օրօր կ'ըսէր, կիսկատար երգերով ու «Տէր ողորմեա»ին եղանակովը, ինչ որ մեռելային հանդիսաւորութիւն մը կու տար իր ըրածին և յանկարծ «քնացաւ» ըսելով բազմոցին անկիւնը կը նստէր դայն, յողնած, ձանձրացած։

\* \* \*

Հիմա, Պաղտիկ անխօս ու մտացնոր, կը դիտէր դայն։ Ի՞նչ հեռաւորութիւն, զինքը տեսած առջի օրուան ու այսօրուան մէջ։ Առաջին ափն օրը ուր, իրեն նոր դրացունէի, ձեր խախտ հագած երեւցեր էր։ Ան ի՞նչ աղ-  
ւոր էր ափն ատենը։ Մազերը խոտրապաւոր էին նորէն, բայց հիմակուան պէս ջղաձիգօրէն ուղիղ ու կանգուն չէին ցցուեր պտուտաղ-  
ները, ճակատը չուրջը փուշէ պսակի մը պէս, այլ լայն շրջաններու մէջ տրտուելով, կոշակներու պէս իրար կը զլէին ու կը կախ-  
ուէին ծոծրակն ի վար։ Ուռուցիկ ու վարդ-  
գոյն ծոցերը դատարի չէին կախուեր ափն ատեն ծակ քսակներու պէս և կարծես ուրիշ աշխարհի մը յառած իր յիմարուհիի պաղ նայուածքին տեղ, թաւալուն, անհանգիստ, հատնումոտ զինղակներ կը շողային աչքե-  
րուն մէջը։

Վերջապէս սիրեր էին զիրար, խենթ ան-  
հաշիւ սէրով մը, հակառակ խել մը նիւթա-  
կան դժուարութիւններու, հակառակ շատ մը խրթին խնդիրներու։ Ինք՝ դեռ զիրք մը ու-  
նենալէ շատ հեռու էր։ Մաքրիկ՝ անժառանգ որբուհի մըն էր իր աղգականներուն տունը,

իրր կէս մը աղախին վար դրուած ու չարա-  
չար գործածուած։

Վերջէն կը յիշէր իրենց ամուսնութիւնը այնքան երկար սպասուքներէ ու սրտմաշուք-  
ներէ ետքը, հինգ տարի առաջ, շատ հան-  
դարտ պարագաներու մէջ, հակառակ նախա-  
պէս տեղի ունեցած փոթորիկալի բանակալի-  
ներու։ Չատ տուն տեղ եղեր էր։ Աղքատիկ՝  
բայց ինքնագլուխ։ Հայրը մայրը զատուեր  
էին իրմէն և իրենց մէկ փեսին հետ էին  
միացեր։ Եւ ինք միւս միւսակ մնացեր էր իր  
սիրական Մաքրիկին հետ։ Տարիներու իր ե-  
րազն էր իրագործուեր։

Աղջիկ-սպառաւ մը, հեռուէն հեռու աղ-  
գականուհի, կու գար օգնելու հարսին, իբր  
տնարարուհի։ Պաղտիկ՝ գործով գրագիր, աշխատասէր ու ճշգրտագին, կը սիրուէր իր  
պաշտօնակիցներէն, կը դնահատուէր իր վար-  
պետներէն և ամենէն երջանիկ մարդը կըզ-  
գար ինքզինքը աշխարհիս, ամենէն փափաք-  
ուած ու ամենէն անխնայ ընտանեկան բոյնը  
կազմած ըլլալով ինքզինքին։

Ամիսները տարիներու էին փոխուեր և իրենց երջանկութեան ճերմակ կամարին վը-  
րայ սեւ բիծի մը պէս ակուր ու աչքի դար-  
նող բան մը կը մնար միշտ իրենց անպտուղ  
միութիւնը։ Երկուքն ալ առաջուց հոգի կու-  
տային, իրենց էութիւններէն ու բերտ խառ-  
նուրդէն բղխելիք սիրեցեալ հագործին վրայ  
որ սակայն կ'ուշաձար, միշտ կ'ուշանար։ Ի-  
րենց անհուն սիրոյն վրայ դատապարտու-  
թեամբ մը պէս կու գար կը ծանրանար այդ  
պարագան և բռնիօրէն կը խորհէին ափն օր-  
ուան՝ ուր վերջին անգամ զատուելով իրենց  
ծնողքէն, այս վերջինները՝ վշտացած իրենց  
տղուն բռնած վզանուտ ընթացքէն, կը  
մաղթէին որ իրենք, — նոր ամուսինները, —  
չըլլան զաւկի տէր, չի տեսնալու համար նը-  
մանօրինակ ցաւեր ու բաժանումներ։

Բայց գիշեր մը, յանկարծ, երբ էվէլ է-  
վէլօք յողնած եւ ուշացիր, Պաղտիկ տուն  
էր դարձեր, կինը ծայրայեղ անհամբերու-  
թիւնով մը և անակնկալին բերկրանքովը  
թրթռուն՝ վրան էր վազեր և առանց զիկզակի  
ու կեղծ նազի, պղտիկի մը աշխարհ գալիքն  
էր աւետեր։

Ալ անկէ վերջը, օրերով, ինչ ուրախութիւն: Հարսնիք մըն ալ անոր համար էին բռններ: Մայրը, — որովհետեւ ալ հիմակուընէ կը զգար որ մայր մըն էր, — պղտիկին կարերը կը կարէր, կը պատրաստէր, ինքզինքին հաճելի ժամանց մը տալու համար որով միջոցին կարենար առիթը ունենալ միշտ անոր վրայ խորհելու: Պաղտիկ, աղուոր պատկերներ, աղուոր մանչու սլափներն կը ժողվէր շուկայէն և կը բերէր կը շարէր պըռօին վրայ, հայելիին եղերքը, պատերուն վրայ, պատուհաններուն մէջտեղունաքը. անանկ որ, Մաքրիկ ցորենին ի բուն, իր աշխատանքին իսկ մէջ, միշտ, ամէն աչքը վեր առնելուն ստիպուած էր յառելու, դեղին, կարմիր, թուխ, խարտեաշ, մեծ պղտիկ, աղուոր այդ մանչուկներուն որոնք սենեակին մէջ, ամէն դիէն կը ցցուէին դուրս, և մանկապարտէզի ամբողջ դասասրահի մը բղէղներուն պէս կը պաշարէին ղինքը, կը ժպտէին, աչք կը քթթէին անուշ անուշ:

Ամիսներ ալ ասանկ էին անցեր: Կէս ուրախ, կէս ալ ցաւի ամիսներ անհամբերութիւնով ու տաժանքոտ սպասուքներով ընդելուզուած: Ութերորդ ամսուն մէջտեղունաքն էր, երբոր հակառակ այնքան հանգըստութիւններու, զգուշութիւններու, ցուրտ օդով, իրենց պարտիզակին մէջ պղտիկ չըրջագայութենէ մը ետքը, — զոր բժիշկը յանձնարարեր էր, մարմինն քիչ մը շարժում տալու համար, — դողով մը ու գլուխիցաւով մը գնաց պառկեցաւ:

Իրիկուն, Պաղտիկ երբ տուն դարձաւ, հակառակ սովորութեան չի տեսու մէկը որ ղինքը դիմաւորէր: Ծեր կիինն ալ կնկանքով էր գացեր հսկելու ու խնամելու համար: Ինչ կար: Արդեօք ծնած էր: Բայց գիտէր որ իր կինը տակաւին չէր սպասեր ատոր: Դժբաղդութիւն մը արդեօք: Եւ երբ դուռը բացուեցաւ, չորս աստիճանը մէկէն վեր կը ցատէր սանդուխէն, հակառակ չափազանց յոգնած ըլլալուն և հակառակ ծեր աղջկան բացագանչութիւններուն թէ վախնալու բան մը չի կայ:

Հետեւեալ օրը դողին ու գլուխիցաւին ու

րիչ վճռական ախտանիշեր ալ յաջորդեցին: Վիճակը կնճռոտեցաւ: Սիրտը կը խառնուէր, տաքութիւն ունէր, խիթեր կը զգար: Փսխեց, լացաւ, զառանցեց: Այն ատեն Պաղտիկ բանը գործը ձգեց մոռցաւ, բժիշկներուն վաղեց և ամենքը մէկ հիւանդին գլուխը թափեց: Ժանտատենդ էր:

Երկար խորհրդակցութիւններէ ետքը որոշեցին որ յղութեան այդ վիճակին մէջ խեղճ կինը պիտի չի կրնար դիմանալ հիւանդութեան սաստիկութեան և մէկուն ողջ մնալու հուանականութեանը համար միւսը զոհել պէտք էր: Մայրը ազատելու համար պէտք էր տղան մեռցնել: Հակառակ պարագային՝ երկուքն ալ հարիւրին հարիւր պիտի մեռնէին: Այդ խորհրդակցութիւնները, որոնք տեղին վրայ և փրանսերէն լեզուով կը կատարուէին, կատարեալպէս կը լսէր ու կը հասկնար հիւանդը, պառկած տեղէն և իր զգացած յուզումներուն, խիթերուն ու լացերուն պատճառով հիւանդութիւնը հետզհետէ աւելի ծանրակշիւ հանգամանք մը կ'առնէր:

Կը պօռար, կը կանչէր, կ'ընդդիմանար, չէր ուզեր որ իր զաւակը մեռցնեն: Աւելի աղէկ կը սկսէր մեռնիլ քան թէ գերեզմանը ըլլալ անոր: Կը զառանցէր, բայց բժիշկները մօտիկ ընելու շատ երեւոյթ չունէին: Ամէն պարտաստութիւն տեսնուած էր արդէն: Ատ տեսնալով Մաքրիկ կը մարէր ճիշդ այն պահուն երբ զաւակը կտոր կտոր մօրմէն բաժնելու գեհնային դործողութիւնը սկսած էր արդէն: Պաղտիկ դուրսը կուլար: Իր խեղքը գլուխն էր և կնկանը պէս չէր խորհեր: Թող զաւակը, այն ալ դեռ չի ծնած զաւակը մեռնէր, որպէս զի մայրը ապրէր: Նորէն փառք Աստուծոյ:

Մաքրիկ երբոր սթափեցաւ, դործողութիւնը դեռ շարունակելու վրայ էր: Աչքովը տեսաւ երեք բժիշկները իրենց օգնականները ըովը, խոժոռ գէմքերով, լայն ճակատներով ու սեւ, կլոր մօրուքներովը, իրենց ճերմակ չապլիկներուն ու սեւ հագուստներուն հակադրութիւնովը, մեռելաթաղերու նմանակ: Իր զաւակն արիւնոտ կտորները լիսպիկ եղած

կերերտը կային լաշն արհեստի մը մէջ : Սոսկումը պատեց զինքը : Աչքերը արիւնով լեցան : Ոտքերը ուղեց շարժել , գետինը զարնել քարկուծենէն , սարսափէն : Բռներ էին : Ձեռքերն ալ բռնած էին : Ինքզինքը կաշկանդուած զգաց ամեն կողմէն և բովանդակ արիւնը զլուսը խուժեց : Սկսաւ պուսալ : Բժիշկները ատիկա աղէկ նշան մը սեպեցին , և « թող պուսայ , ուղածին չափ պուսայ » ըսին խնդալով :

Հիւանդութիւնը օրեր տեւեց : Մաքրիկ օրերով մահուան և կեանքին մէջ լաշն ճօճումներ դժեց : Էրիկը մնարէն չի բաժնուեցաւ բնաւ , մինչեւ որ ամէն վտանգ չանցաւ : Եւ իրաւ ալ ամէն վտանգ անցաւ անոր կեանքին սպառնացող : Տղան մեռաւ , բայց մօրը կեանքը ազատուեցաւ : Հիւանդութիւնը գնաց , բայց զառանցանքը մնաց :

Ապաքինութեան միջոցին , իր միտքի այդ հիւանդութիւնը այնքան աւելի կը շեշտուէր որքան իր մարմինին աւուղծութիւնը կը վերադառնար : Յօրեկին ամենէն խենթ բաները կ'ընէր և էրկանը բացակայութեանը ատեն , ծեր պառաւին ուժերը չէին զօրեւր զայն զըստելու և իր ըրած տարօրինակութիւններէն ետ կեցնելու : Յիմարի յամառութիւնով մը սկսեւ էր անուագ ալ չառնել և նորէն սկսած էր վատուծնալ ու հիւարիլ : Ամէն ատեն պէտք եղածին չափ բժիշկներու եւ խնամքներու ալ նիւթապէս անկարելի կ'ըլլար հասնիլ : Այն ատեն որոշեց Հիւանդանոց փոխադրել զայն , առաջին պատահութիւնով նորէն տուն բերել տալու հաստատ առաջադրութիւնով : Երբէք յոյսը չէր կտրած արդէն : Հարկաւ նորէն պիտի աղէկնար : Զգացած սոսկալի ցաւերուն , յուզումներուն ու վիշտին հետեւանքովը առաջ եկած միտքի ցնորական այդ վիճակը հարկաւ երկար պիտի չի տուէր : Բժիշկները աւելի մօտէն ու աւելի յարատեւ կերպով պիտի հսկէին անոր վրայ , պիտի խնամէին զայն և քիչ ատենէն իրեն պիտի յանձնէին զայն , ողջ առողջ ու մաացի առջի պէս : Եւ այդ քիչ մըն ալ իրենց պարտքը կը սեպէր ան , քանի որ կերպով մը առնք էին եղբիւ անոր հիւանդութեանը պատ-

ճառ : Եւ ամէն երկուշաբթի այդ յոյսով , միշտ ըրած էր Պոլիսէն Եէտիգուլէ իր ճանճրալի ճամբորդութիւնը , ամէն անգամուն ալ սըրտաբեկ , յուսահատ ու ջախջախուած վերադառնալու համար :

\* \* \*

Հիմա , Մաքրիկին էն մեծ ունակութիւնը , սեւեռուն դաղափարը խենթութեան բեւեռն էր , դոյնդոյն քուրջերէ կարկսուած կլորիկ բարձիկի ձեւ զանդուած մը գոր իր պէպէքը կը կոչէր և դոր իր չոր կուրծքին վրայ կը սեղմէր , հոգի տալու համար կարծես անոր :

— Սատանաները կտոր կտոր ընել ուղեցին չօճուխս , բայց ան չի մեռաւ նորէն : Նա յէ , առ ալ կտոր կտոր է , բայց ողջ է : Ի միջոց է , չեմ իտար ձեղի , կը բացադանչէր , սլատերէն վեր անձանթ ոգիներու հետ խօսելով :

Եւ յանկարծ բժիշկներուն դէմ ամբաստանութիւններու , լուսանքներու շարք մը կը սկսէր , մէկէն ի մէկ վերջաւորուելու համար՝ հիմա զինքը խնամող յիմարարոյժին նկատմամբ անհուն ներդաժմութեան մը ու երախտադիտութեան մը մէջ :

— Չէ , իմ Տօքթօրիս բան մ'ըսէք : Տօքթօր Մօնճէրի , մէ սէ մօն չէրի !

Հիւանդանոց դառնուելէն ի վեր գրեթէ կանոնաւորապէս ճաշած չէր և չատ քիչ անգամ , դժուարով , գրեթէ բռնութիւնով բերանէն վար կը լեցնէին քիչ մը միտի ջուր , ան ալ Պաղարիկէն ստիպումովը , աղաչանքովը , և զինքը Հիւանդանոցէն դուրս հանելու համար տուած կրկնակի խոստումներովը :

— Հատէ՛ խուչս , կե՛ր որ աղէկնաս :

— Ես խենթ չեմ ասոնց պէս , կը պատասխանէր ցոյց տալով իր դժբաղդ ընկերուհիները , որոնք միեւնոյն բանը կը կրկնէին զինքը և կամ զիրար ցոյց տալով : Ես անթի չեմ , չեմ ուտեր : Չաւակաւ ալ անթի չէ , չուտեր : Եւ սակայն ոչ ես կը մեռնիմ կոր ոչ ան : Երբ որ անթեանք պիտի ուտենք հարկաւ : Ապրելու համար ճաշելու է սնապաճառ : Օղով չապրի՛ր մարդ միթէ : Նայեցէք , աղաս ինծի եղած է : Չանթեմնար : Ես կուտամ կաթը , ան չառնել : Երբոր ան կաթն առնէ , ես ալ

անօթեհնամ պիտի և պիտի ուտեմ որ կաթ հասցնեմ զաւելիս...

Եւ նորէն տախտակ կուրծքը բանալով, բարձիկին դուռը կը խօթէր թաց լաթերու պէս կախուած ծիծերուն մէջտեղուանքը...

\* \* \*

Անգամ մը Պաղատիկ, երբ սովորութեան համեմատ, այցելութեան օրը, Հիւանդանոց եկաւ, դտաւ իր կինը, միտքի սրայծառացու մի ցանցառ իր ժամերէն մէկուն մէջ: Սիրտը խաղաց: Աղէկցա՞ծ էր արդեօք, կամ գոնէ սկզբնաւորութիւնն մըն էր՝ բանականութեան վերադարձը աւետող: Նստեցան, աղուոր աղուոր խօսեցան, իրենց անցուցած դժբաղդ օրերը աւաղելով եւ ասպագայի նոր ու գեղեցիկ երազներ պարզելով: Բարձէ պէպէքը անկիւն մը երեսի վրայ լքուած կը փռուէր հովէն ինկած խրտուիւակի մը պէս: Միւս խենթութիւնները, ձանձրացած անոնց հանդարտ ու անխօս նստուածքէն, ելան դացին ծաղրելով, անդի մեծ սրահը ուր ամէն մարդ ժողուած էր չոր հասած դեռատի ու փափուկ աղջկան մը գլուխը որ մէկ ձայն կը պօռար մէկ շունչով, հատորներ լեցնելու չափ պարսպ ու անկապ խօսքեր յորդեցնելով բերանէն դուրս: Իրենք մինակ մնացին նեղ սենեակին մէջ և բոլորովին հանգիստ խօսակցիլ կարենալու համար, անդի սրահէն եկած աղմուկէն հեռու, զնաց դուռը դոցեց Մաքրիկ՝ որուն շարժումներուն մէջը սակայն միշտ կը զգացուէր խորհրդաւոր ու վառ տենդոտութիւն մը, առերեւոյթ հանդարտութեան մը տակ: Աչքերը կը վառէին սովորականէն տարբեր փայլով մը որուն մէջը բանականութեան նշոյլը ու միանգամայն մարմնական տենջանքի հուրքը կը ցլանային: Տափակ կուրծքը կ'ելլար կ'իջնար փքոյր պէս: Ականջները՝ կասկարմիր, կրակ կտրած էին և տաքութիւն մը գլուխէն կիջնար ծո՞րակէն վար, դէպ ի կրնակը:

Դուռը գոցելուն պէս, եկաւ Պաղատիկին ծունկերուն վրայ նստիլ: Այս վերջինը, նոր յոյսերով սիրտը ուռգուած, դուարի, արքշիւ, ձայն չի հանեց: Մաքրիկ թեւերը սլուց անոր վիզին և գիւլային տարօրէն նայուածքով մը.

— Ինձի կը սիրե՞ս դեռ, Պաղատիկ, հարցուց:

— Կը հարցնե՞ս, եղաւ իր պատասխանը, երբ միեւնոյն ատեն կը զգար ծունկերուն վրայ, իրեն փոխանցելը հաղորդական բուռն այն կրակին՝ որուն Մաքրիկի կրեակն ի վար իջնալը, ձեռքովը շօշափածի պէս յստակ կերպով զգացեր էր: Հիմա ինք ալ կիմանար այդ խռովիչ ու անբացատրելի ջերմութեան տարածուիլը իր մէջ, ծունկերէն վեր դէպ ի կուրծքը, դէպի գլուխը բարձրանալը, հըրդեհիլը, բոցավառիլը: Ծանրութիւն մը կը զգար գլուխին մէջ, ճիշդ ինչպէս ծունկերուն վրայ, այդ պահուն: Տէր Աստուած, հիմա ալ ի՞նք պիտի խենթեանար արդեօք: Ակտաները կը կափկափէին: Սիրտը կը զարնէր: Զեռքերը կը դանդաջէին: Զգացած ուրախութենէն էին այս ամէնը թէ անծանօթ վախ մը, անբացատրելի բան մը թափ կու տար ներսիդին, չէր հասկնար, երբ Մաքրիկ աներեւակայելի ուժով մը իրեն փարեցաւ և իր ոսկորները կոտրուելու աստիճան սաստիկ կերպով սկսեց զայն կուրծքին վրայ: Պա՛ մը կարծեց որ նորէն խենթեցած էր և կուգէր զինքը խղդել, Բայց երկու տարուան սիրային զրկանք մը սաստիկ, հակազդեցութիւն մը առաջ բերած էր իրենց երկուքին ալ մէջը և քիչ մը առաջ իրենց յիշած ու երազած աղուոր օրերը գրգռած ու մղած էին զիրենք սա գերագոյն տազնապին մէջ ուր ինք կըզգար կորանցնել իր բանականութիւնը այնքան որքան շահած ըլլալ կը թուէր իր կինը, Մաքրիկ: Ինչ որ ալ ըլլար, սա սոսոյգ էր սակայն որ, երկուքն ալ հաւասարապէս անգիտակից էին ինքզինքնուն և այդ պահուն խենթերու այդ հաստատութեան մէջ, տեղի ունեցաւ ամենէն անհաւատալի, ամենէն բուռն, ամենէն արտառոց ու ամենէն ալ սրտառուչ միանգամայն բանը որ կարելի ըլլայ երեւակայել երբեք: Գերազոյն խենթութիւնը:

Դիպուածը մեղքեր ու բարեբաղդութիւնը պարգեւեր էր իրենց en flagrant delit չի բռնուելու, ապա թէ ոչ, երկուքին ալ մէկ, Հիւանդանոցէն վառուելը բան մը չէր: Ան իրիկունը Պաղատիկ յոյսով ու հեշտանքով

գինովցած տուն դարձաւ ինկանը խոստանալէ ետքը որ առաջիկայ շաբթու առնէ տանի զինքը : Իրեն անանկ կու գար որ մինչեւ այդ օրը , որ եւ է դժբաղդութիւն չէր պատահած իրենց : Եւ միմիայն այն օրուան իրենց խելակորոյս միութիւնը յիշեց ու երազեց :

Յաջորդ անգամ Մաքրիկը գտաւ նորէն , մտային խանգարումի նոյն աստիճանին մէջ , ուր էր Հիւանդանոց բերուած օրը : Պատրանքը ու կսկիծը կրկնապէս սաստիկ եղան եւ յուսահատական : Միւս շաբաթներուն ալ միշտ նոյն վիճակը կը շարունակուէր պայծառատեսութեան խիստ կարճատեւ ու ցանցառ փայլակներով կտրատուած : Միայն թէ պղտիկ գոհունակութիւն մը կը դգար տեսնալով որ Մաքրիկ կը սկսէր ախորժակ ունենալ : Կուտէր առանց դժուարութեան ու նոյն իսկ սիրայօժար : Առողջութիւնը կը վերադառնար , երեսները կը դուռնաւորուէին , կուրծքերը կ'ուռնային նորէն : Բայց խելագարութիւնը աւելի կը սաստիկանար կարծես և կատաղի հանդամանք մը կ'առնէր : Բարձէ պէպէքին կը հրամայէր ախորժակ ունենալ , կաթ ծծել , կշտանալ , մետնալ :

— Մինչեւ երբ աս պոյը պիտի մնաս , կը պօռար դայրագին : Տես ես ինտոր կուտեմ կոր , դուն ալ անանկ կեր : Չէ նէ հիմա բըզիկ բզիկ կը հանեմ քեզի . . :

Եւ իրաւոյնէ ալ կը փեթտէր դայն , թոյլ , պատառատուն , բամպակները դուրս քաշելով մէջէն , և ուժով մը պատուհաններուն կը նետէր , որոնք մեծամխոր չխրաւմով մը կը ջախջախուէին , կը շառաչէին : Պաղտիկ՝ քու վը նստած , արցունք կը թափէր :

Բժիշկը բռնութեան չապիկ անցընելէ առաջ , վերջին քննութեան մը պէտք տեսաւ և ի՞նչ մեծ եղաւ իր դարմանքը , ասըութիւնը , երբ յղութեան նշաններ տեսաւ անոր վրայ : Չառ սենեակ մը փոխադրեցին ու մասնաւոր խնամքի առարկայ ըրին դայն : Խիստ քննութիւն մը բացին որ արդիւնք չի տուաւ : Պաղտիկ անցածը դարձածը ուրացաւ : Ներքին Տնօրէնութիւնը գործը խզելու աշխատեցաւ , գայթակղութիւն չի հանելու և պատասխանատուութեան տակ չիցնալու համար : Պաղտիկ բարկութիւն կեղծեց : Բժիշկը յոյս

յայտնեց որ եթէ դաւակ ծնի՝ մայրը բողբոլվին կ'աղէկնայ , դաւի խենթութիւնը կ'անցնի : Պաղտիկ այս նոր յոյսով ոգեւորուած՝ խնդր չի յարուցանել ձեւացուց և ամէն բան կարգի մտաւ :

\* \* \*

Ամիսներ ետքը , Մաքրիկ , մանչ մը ծնաւ : Կայտառ , առողջ , գիրուկ մանչ մը : Բառսունքէն ետքը տուն փոխադրուեցաւ , որովհետեւ բողբոլվին բժշկուած էր : Յիմաւարայօժը ճիշտ էր գուշակեր : Միտքի խանգարումի ամենայնոքին նշոյն իսկ անհետացած էր : Հիմա իր իրաւոյնէ դաւկին էր որ կաթ կուտար , լեցուն իր ծիծերովը : Պաղտիկի սիրտը ու տունն ալ , գոհունակութեան ու խայտանքի ծիծաղներով լեցուեցաւ : Բայց . . .

Բայց . . . ցնորքի , մոռացութեան վայրկեանի մէջ յղացուած ու խելագարներու այդ ապաստանարանին մէջը սնած , իրենց առողջ բայց խենթ սիրուն արդիւնքն ալ , ի ծնէ , անբուժելի , սրտամորմօք խենթ մը եղաւ : Այդու չմը , ցնորած մը , ցաւագար վերնոտ մը , առողջ ու կայտառ երեւոյթի մը տակ , իրենց սիրուն պէս :

Յաւիտենական տուամն էր մօրը ու դաւկին միջև : Մէկը կը մեռնէր միւսը ազատելու համար որ մայրութեան ցաւէն կը խենթենար : Հիմա ալ խենթ դաւակն էր որ կու դար «դաւիկ խենթ» մայրը բուժելու համար :

ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՅ .

## ԿՆՈՋԱԿԱՆ ԴԵՍՔԵՐ

ՌՕՐՄՕՐՏ ՁԷՌԱՐ

1889ին , Լըմէս երկու բանաստեղծական հատորներ հրատարակեց , Musardises և Pipeaux , մէկը հոմօն Ռօսդանի և միւսը Օրիորդ Ռօդմօնս Ժէնարի անունով , — երկու գիրքեր , որոնք իրար կը լրացնեն :

Նշանածներ էին արդէն , և Օր . Ժէնար չէր քաշուած հրատարակութեան տալու սի-

րային քերթուածներու այն հատորիկը որուն երեւումը կատարեալ անակնկալ մը եղաւ գրականութեան համար: Բայց Ռօզմօնտէն աւելի Ռօսդանն էր շահողը, և այդ գիրքերուն հրատարակումէն անմիջապէս վերջը, Օկրեդէն Ֆիլօն, բարիզեան Հանգէսի մը մէջ գրեց թէ Ֆրանսա նոր բանաստեղծ մը ծնած է: Ռօզմօնտի ուրախութիւնը չափ չունէր, երազները կամաց կամաց կ'իրակայանային, ու այս անգամ սկսաւ աւելի՛ ուժգնօրէն, աւելի՛ տարփոս շնչոտելով իր սէրը երգել, և Ռօսդան յափշտակուած էր այն բարեկամուհիին, որուն աղղեցութեամբ միջոցաւ բարձրացած՝ կրցաւ վերջապէս օր մը Մադարլինեան Տան դմբէթէն ներս մտնել, իր երիտասարդ հասակին մէջ իսկ: Կը կարծեմ որ հիմա ամէնքդ ալ կը ճանչնաք զայն, Ռօսդանի յաւիտենական սիրուհին, բարեկամուհին, ներշնչող պարիկը:

Հաւտալս չի գար երբ կը մտածեմ որ գրականութեան մէջ ասանկ մէկը կը գըտնուի այս պահուս: Գրչի կիներու սա տափակ ու միամիտ վռնակին մէջ, ուր ամէնէն չատ պայմանադրութիւնն ու անորոշութիւնն է որ կը տիրէ, խորհիլ թէ մէկը կայ որ երեւակայութիւնք ամէնէն անուշ ու ամէնէն երազային առաւելութիւնները կը միացնէ իր անձին վրայ, դիւրաւ հաւատացուելիք բան չէ:

Ձեմ գիտեր ինչ տարօրինակ հմայք էր որ ղիս այդ անուհին կապեց անգամ մը, և հիմա աչքիս՝ կատարեալ կիներ կը ներկայանայ անիկա, կին մը որ հրապուրիչ է, կին մը որ անկեղծ է, բարի է և ամէնէն աւելի՛ բարեկամուհի:

Դրական պատմութիւններու մէջ չեմ հանդիպած կնոջ մը որ աչս տեսակ տրամադրութիւն մը ունենայ անկեղծօրէն գրելու համար: Դօզի պէս նուրբ, թափանցանց, փափուկ բանաստեղծութիւններ են ամէնքն ալ, զգայութիւններու և յափշտակութիւններու աղղեցութեամբ արտադրուած. չեմ ըսեր որ ոտանաւոր են անոնք, այնքան արձակուհակ, այնքան յստակ են:

Արդէն ինք ալ կը խոստովանի ատիկա, թէ եւ տարբեր միտքով մը.

Tu me dirais que ces vers sont en prose.

Այսքան զգայում, այսքան պաշտում՝ կնոջ մը գրչին տակ, հիանալի է շիտակը: Կը կարծես որ դիմացդ է անիկա, ու իր խարտեալ աղուոր դէմքը քեզի դարձուցած, ձեռքերը ետեւը խաչաձեւ, ընդվզող, չարածճի մպկտով մը, կ'երգէ:

Իր բոլոր քերթուածներն ալ սիրային արտադրութիւններու գլուխ-գործոյներ են ընդհանրապէս, կանացի անխարդախ ու մաքուր սիրոյ մը տաք շունչովը գրուած, նուրբ, հիանալի բառերով, երբեմն չափադանցուած, բայց միշտ անկեղծ: Ամէնէն կրկնուած բացատրութիւնն իսկ, իր լեզուին, իր քերթուածներուն մէջ, նոր, անբացատրելի ասուութիւն մը կը դառնայ և արդէն կարելի չէ երեւակայել մէկը, որ փրփրուն, բուռն տարփանքի մը միջոցին, սիրոյ յաւիտենական բանաստեղծութիւններէն այսչափ յաջող կերպով կարենայ խոստովիլ:

Ձէք դմայիլի այն կնոջ վրայ, որ միամտաբար և ափգունութեամբ ներում կը խնդրէ այն ատեններուն համար, ուր չէ ճանչցած իր սիրականը, այն խոհերուն եւ յուշքերուն համար, զորս անոր չէ ուղղած:

Տեսէ՛ք ինչ կը գրէ իր բարեկամին, — բարեկամ կ'ըսեմ, որովհետեւ ասկէ աւելի նուիրական ու սիրուն բառ չեմ կրնար պատշաճեցնել իրենց սիրոյն, ինչպէս արդէն Ռօսդան ալ ըսած է ոտանաւորի մը մէջ:

Անյուսութիւնս ես, ու յոյսես աղուոր, և խորհուրդներս՝ յուրջ կամ խօսկան, երանութիւններս ու վիշեսքս բոլոր.

Ձի դո՛ւն կարող ես յուզել զիս միայն: Տեսութիւններս ես, խիճդես անպարսկակ, Ու բոլոր յուսեքս անուշ կամ ցրտեմ, Սերես ես, հոգի՛ս, գգուանքներս համակ, Բանգի քեզմէ զա՛ս ո՛չ ոք կը սիրեմ:

Չգացումը՝ անոր մէջ հրաշալի է իրականութիւն: Ո՛չ մէկ գրող, իր սիրոյ անդնդային խորութիւնը, իր բարեկամութեան անհունութիւնը բացատրելու համար, այդքան պարզ ու մեկին պարբերութիւններով

Հայտի կարենար յաջողիլ. ինքզինքը երբեք չի նեղեր զրական գիւտ մը ընելու միամիտ ճիգերով. հոգեկան դառնութիւնները, սրտին տառապանքները, իր պաշտումին վէսութիւնը կը նկարագրէ, հասնելով միայն, ինչպէս խօսած ատեն՝ երբ մարդ իր սիրածին քով կը գտնուի:

Կնոջական բանաստեղծութիւններու եւրոպական սա անհամ ու տաղտկացուցիչ հրատարակութիւններուն մէջ, հանգիստած էք Միմոզայի փունջին պէս կտորի մը որ բացարձակապէս ազուր քերթուած, զմայլելի միամտութեամբ մը գրուած է:

Նիւթը պարզ է, կրնամ երկու տողով բացատրել հոս:

Օրիորդ Ժէռար, — միշտ այս անունը կը սիրեմ գործածել, — որ մը Ռօսդանի լամբակին վրայ միմոզայի վնջիկ մը տեսնելով կը խնդրէ որ իրեն տայ զա՛ն իկա. Ռօսդան կը մերժէ, եւ երբ Ռօզմօնտ քիչ մը վշտանալով կ'ուզէ այդ մերժումին պատճառը իմանալ, Լամօն սապէս կը պատասխանէ. — «Կ'ուզէի գիտնալ թէ ի՞նչ դէմք կ'առնես, երբ պզտիկ, աննշան բան մը քեզի մերժուի...»:

Սիրուն չէ՞:

Գրական յոգնութիւն ըսուածը երբեք չես նշմարեր Ռօզմօնտի քերթուածներուն մէջ, սէրն է որ կ'ուժովցնէ զինքը, սիրով է որ կ'ապրի:

Et comme chaque jour je t'aime davantage  
Aujourd'hui plus qu'hier et bien moins  
que demain

Այս երկու տողին մէջ պարփակուած է իր ամբողջ հոգին: Իր պաշտումը, Ռօսդանի հանդէպ, անհուն ու անշիջանելի հրդեհ մըն է կարծես, որ մարիլ չի գիտեր, որ կը վառի, կը ճարակի անդադար:

Ըրած զրականութենէն աւելի իր էութիւնը, իր հրեշտակային անձն է որ կը տարփողուի այն ամէն մարդոց կողմէ, որոնք զիրենք ներշնչող, բարի, զգլխող բարեկամուհին կը փնտռեն միշտ, խարխալելով միշտ, չի գտնելով երբեք, պատրանքներու, յուսախաբութիւններու այս աշխարհին վրայ,

ուր մարդիկ սէրը իբր կիրք մը ըմբռնած են և բարեկամութիւնը՝ վայելքի, ժամանցի պատրաստ միջոց մը:

Եւ անա ճիշդ այս խորհրդածութեան համար էր որ յօդուածիս սկիզբը կ'ըսէի թէ հաւտալս չի դար մտածելով որ ասանկ մէկը կ'ապրի հիմա, Գաղղիոյ ոստանին մէջ:

Եւ սակայն կ'ապրի...:

Ռօսդան իր գրական համբաւը այդ կնոջ կը պարտի բացարձակապէս: Ռօզմօնտ ժամերով կը նստէր իր բարեկամին մօտ, աղուոր բացատրութիւն մը, սիրուն գիւտ մը, յանգ մը, յարմար վերնազիր մը դանդաղ համար, Ռօսդան գաղափարը կը յղանար և զայն յարգարող Ռօզմօնտն էր, մէկէն մնացած կիսատ գրութիւն մը միսսէն կը լրացուէր յաճախ, և ետքէն, ասանկ անախակալներէ վերջը, իրենց սէրը, իրենց բարեկամութիւնը՝ յօդող, պոռթկացող բան մը կը դառնար, նայուածքի անհուն պատարագ մը:

Անգամ մը Ռօսդան օրն ի բուն գեղօնի մը հնչուն յանգերուն վրայ աշխատեր էր. կարդացած, յետոյ դա՛րձեալ կարդացած և միշտ սրբադրած էր. վերջապէս արուեստագէտի նրբակրկիտ դժուարահաճութիւնով մը, ինքզինքէն ու ոտանաւորէն դժգոհ, անձնութեամբ պատուած էր զայն:


— Մեղք, ըսաւ Տիկին Ռօսդան, տխրօրէն:

Եւ երբ ամուսինը մեկնեցաւ սենեակէն, առանց իմաց տալու, տարօրինակ համբերութիւնով մը, պատուած թուղթին բոլոր կրտորուանքները հաւաքեց և իրար բերելով դոյ ըրաւ զայն:

Շաբաթ մը ետքը Ռօսդանի միտքը ինչ կաւ իր գեղօնը: Քանի մը յանգեր կը յիշէր միայն, ա՛յսչափ: Յաւեցաւ պատուած ըլլալուն համար:

— Բայց գիտե՛մ ես, պոռայ պարիկը, յաւիտենակական բարեկամուհին, ես զո՛ւց գիտեմ քու գեղօնդ, կ'ուզե՞ս որ ըսեմ — Եւ ի՞նչ աղուոր ա՛ղուսէ չթիւնքներովը, մեղմադ՝ ձիկ, անընայոյզ աչքերով, այդ բանաստեղծութիւնը արտասանեց, մինչդեռ Ռօսդան, անախակալէն ապշահար՝ կնոջը վրայ խոյացաւ, սէրէն, տարփանքէն մոլեգնած:

Մ. Ա. ՊԱՐԱՄԵԱՆ



ԳԵՈՐԳ ԳԱԲԱՍԱՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մահուանդ դժնե բօքն հասաւ ինծի վա՛ղ...  
Ու դժխեմ բաղդին հաւուածներն ա՛նգուք  
Անգամ մ'ալ ըզմեզ խոցեցին , աւա՛ղ .  
Ինչո՞ւ դեպ անհուն չըւելդ այսօրն շուս :

Թաւմ կեանքդ եր յոյսով ու յոյսով լեցուն ,  
Խնկաբո՛յր բուրվառ՝ մըխացող յաւեհ .  
Ու մեր ժամ ճակի՛ն վիճեցով օծուն ,  
Սերն էիւ միակ , խոսուումն արվաւեհ :

Անդունդին եղեքն ի՞նչ կար գրաւիչ ,  
Ուր տեղ սիրեցիր քափառիլ միճակ .  
Ինչ ձախող վայրեջք մ'էր դառնակսկիծ  
Դեպ ի խաւարին զոգն անյիշատակ :

Ինչո՞ւ մեռցուցիր մտիդ հրմայոհ  
Անուշն ոսկեհիւս . Ինչ գաղտնիք մըքին,  
Լուծելու համար կեանքին անձանօք  
Ու բսուեցաւ անտեղծուածն յետին :

Մօրդ արցունքներով ուռած սրտին մեջ ,  
Խոցոս վեհ մ'եղար, մորմո՛ւ վեհագին .  
Կոտորող ցաւին զայրուցովն անեղ  
Մահացուցիր զայն , ու մեր ալ հոգին :

Դեպի անձանօքն անհուն ճախրեցիդ  
Մեջն իցի՛ւ չըլլաւ յուսախաբ կրկին .  
Ու երազներով սրնած կոյս հոգիդ  
Հասնի՛ միւս կեանքին բարձունքն անմեկին :

Վ.Ա.Բ.Գ.Գ.Է.Ս

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԱՊՕՐԲՆ ՍԷՐԵՐԸ

(ՕԶԱՍԷԻ 'ՀԱՐՅՈՒՄ', ԻՆ ԱՌԹԻԻ)

Պարզուկ՝ սովորական հարցումն ձեւին  
տակ , վերին աստիճանի կարեւորութիւն ու-  
նեցող հարց մըն է զոր մէջտեղ կը նետէ  
Զիֆթէ-Սարաֆ, Մասիսի Վերջընթեր (22)

Թիւին մէջ . կարեւոր՝ հանրային բարոյականի  
տեսակետով , ընկերային տեսակետով ու , —  
աւելցնենք մեր կողմէ — աղգադրական տե-  
սակետով զոր հետաքրքիր հարցասէրը կամ-  
բժով թէ ոչ՝ չեմ գիտեր՝ զանց կ'ընէ , թէ-  
պէտ զուտ ժողովրդագրական — աղգադրական  
խնդիր մըն է զոր կ'առաջարկէ , ինչպէս եր-  
եւան պիտի դայ՝ բնականօրէն՝ տրուելիք  
պատասխաններուն մէջ . միայն թէ , այդ ու-  
սումնասիրութիւնները մտացածին չըլլան , և  
իրենց մէջ ի յայտ բերեն դէպքեր , իրողու-  
թիւններ՝ յարգելով անշուշտ տեղի և անձի  
անուններու մասին զգուշաւորութեան պայ-  
մանը :

Աւելորդ չէ հոս կրկնել կամ բանաձեւել  
իր հարցումը .

Իրա՞ւ ե ուր ապօրինի յարաբերութիւնները  
կը վիսամ գաւառներու մէջ եւ երբե՞ն ի վեր :

Կը վիտա՞ն... ո՛չ՝ առ չափազանց է , որ-  
չափ կը ներկն վճռել՝ իմ ծանօթութիւններս  
գաւառներու վրայ : Բայց մարդ էակը , ո՛ր  
սեռէ ալ ըլլայ , զարգացումի ի՛նչ աստիճանի  
վրայ գտնուի , մա՛րդ է վերջապէս , «ո՛ր  
հրեշտակ է ո՛չ ալ փայտի կտոր» այլ մա՛րդ  
է , կի՛ն է , զգայուն էակ , «բնութեան ձայ-  
ներովն առլի» որ գեղեցկին հանդէպ կը  
յուզուի և սեռին պահանջումներուն դո՛ւս-  
ցում տալ կը հետամտի աւելի կամ նուազ  
զգուշաւոր ձեւով , աւելի կամ նուազ հա-  
մարձակօրէն :

Բայց ինչո՞ւ ներկնք որ «Գեղեցիկ այրին»  
բնական զգայնութիւններու ընդունակ ըլ-  
լայ : Միայն թէ՛ գաւառական բարքերու , տե-  
ղական պահանջումներու բերումով , «Գեղե-  
ցիկ այրին» (իմա՛ ո՛ր և է գաւառացի կին) կա՛մ  
գերադոյն ձիգով մը պիտի խղդէ բնութեան  
ձայնը , ինչպէս մեծամասնօրէն յայտնի է , և  
կա՛մ գաղտագողի պիտի յագուրդ սոյ իր  
ղգայական տենչերուն :

Առաջին պարագային համար պիտի առար-  
կուի թէ բնութեան դէմ անգութ ու քան-  
դիչ մաքսում մըն է :

Երկրորդ պարագան ալ Կեղծիքի դրու-  
թիւնն է , Ապականութիւնն է որ կը գործուի  
ո՛վ գիտէ ո՛ր աստիճան ընդարձակ սահմանի

մը մէջ, — հետեւաբար ծիծաղելի է, կ'ըսուի, հռչակուած պարկեշտութիւնը գաւառի հայ կնկան «լոր չովէնները կը շահագործեն» եղեր:

Շխտակը խօսելով՝ աւելի երկոյսյարաւանութիւն մըն է այս հարցումը, որուն տրուելիք երկու պատասխաններն ալ շատ ջուր կրնան վերցնել, թեր ու դէմ վիճաբանութիւններու դուռ բանալ — առանց շօշափելի օգուտի. վասն զի չեմ կրնար հաւատալ թէ այս կարգի վիճաբանութիւնները ո՛ր եւ է ազդեցութիւն ունենան և ընկերական ո՛ր և է կարգուսարքի անմիջական փոփոխութիւն մը առաջ դադ անոնց չնորհիւ, քանի որ անոր հետ աւելցնութիւն ունեցող շատ մը խնդիրներ ալ կան, ինչպէս սնտեսականը, ցեղայինը, ևւայլն: Ապագան ալ, շատ չեմ կարծեր որ դիմանայ à quoi s'en tenir: Շատ շատ՝ այս կարգի ուսումնասիրութիւններով եթէ կարելի ըլլայ որոշ վիճակագրութիւններ ձեռք բերել, ամուսնական նոր կանոնադրութեան մը պէտքը կը շեշտուի, ու պարագայական դարձաններ կը ստեղծուին, ինչպէս որ հիմա շատ մը դաւառներու ամուսնական վիճակը բացառիկ անօրինութեան մը պէտքը:

Բայց զգալի կ'ընէ Զիֆթէ — Սարաֆի ակնարկած պարագան բացառիկ և գիպուածական տեսակէն չէ, այլ սովորական պայմաններու ներքեւ, հինէն ի վեր ամուսնական և սեռական զեղծումներու կամ՝ ուրիշ բառով՝ ապօրինի յարաբերութիւններու վրայ է խնդիրը:

Եթէ չեմ սխալիր, առաջին անգամ է որ այս ձեւին տակ ուշադրութեան կը ներկայանայ այս «յարաբերական խնդիրը»: Ազդեղբակտն ուղղութեամբ Բիւրակի հրատարակութեան երեք տարիներուն մէջ, ընաւ առիթ չունեցանք գաւառական սիրային սովորութիւններու վրայ բաներ մը հրատարակելու և՛ չիտալին ըսելով՝ այնչափ նիւթերու պէսսիսութեան մէջ, մտքէ անգամ չանցուցինք աս մէկը որ նուազ կարեւոր, նուազ բարացուցական չէ:

Նոյն իսկ, Բրոֆ: Խալաթեանց իր ծանօթ Ժողովրդագրական Մրադրին մէջ շատ հաբեւանցի մը իրօսած է՝ պատեօսական սեփ

(ամուսնութեան) և հասնիքի սովորութիւններուն վրայ (սե՛ս հոն գլուխ է. էջ 19), իսկ ընդհանրացած ապօրինութիւններու և սեռային յարաբերութիւններու խօսքը ընաւ չ'ըներ:

Եւ, աւելի՛ ճշգելու համար դերերը, պէտք է ըսենք որ հարցումը երկու և երեք մաս բաժնուելու է՝ որոշելով ապօրինի յարաբերութեանց 1. Այն տեսակը որ կոչնշանածութեան շրջանին մէջ և օրինաւորին նախատահան է (եթէ կը ներուի այս բացատրութիւնը): — 2. Ամուսնութեան վերջը, տարբեր ամուսնուած մէջ կամ ամուսնացեալներու և ամուսններու մէջ և կամ այրիներու մէջ մշակուած ապօրինութիւնները: — 3. Անբնական յարաբերութիւնները, եւն:

Առաջին պարագան, որ օրինաւոր ամուսնութեան շէմը կը սեպուի, կրնայ որոշ ձեւի մը տակ ուսումնասիրուիլ և այլ և այլ դաւառներու մէջ տիրող այդ կարգի սովորութիւնները կ'արժէ հաւաքել, ինչպէս հարսանեկան ծէսերն և ուրիշ աւանդութիւններ զրի աւանդեցան: Ինծի ծանօթ դաւառներու մէջ, նշանածութեան շրջանին համար երկու ծայրայեղ եղբեր պիտի յիշեմ: Մէկ ծայրն է Շահարիկի գաւառավէպին մէջ յիշուած զոր Օչասէ ալ մէջ բերած է՝ իրբու արտակարգ և անակնկալ յայտնութիւն մը:

\* \* Թէ՛ նշանտուքէն ետքը, երկու նշանածներ կրնան զիրար տեսնել, նոյն իսկ առանձին մնալ, նոյն իսկ գիշերային վայելքներ ունենալ...

— Իմ պատասխանս է այն՝ այս հարցումին երեք աստիճանաւորումներուն համարալ:

Ոչ ոք թող ընդվզի՝ սրբանայ, փարիսեցիական կեղծ աւաքինութիւն ծախէ: Հոս խնդիրը ընկերաբանական — ազգագրական հարցի մը երեւոյթին տակ կը ներկայանայ, և եղելութիւնը՝ ճշմարտութիւնը պարտկել, անօգուտ ու անխելք գործ մը պիտի ըլլար:

Այո՛, գաւառներ կան ուր նշանած մանչեր իրենց ազգականներուն ու բարեկամներուն հետ (չլիսաւորաբար հասակակից) իրենց խօսեցեալին տունը կ'երթան գիշերային ու լախութիւններ կատարելու: Խրախճանտութիւններ, գիներբուքներ կ'ընեն հոն, կը խա

դան, կը խնդան, և ինչ: Խնամի հիւրերը ոսկի կուտան հարսնացու աղջիկին որ՝ կարմիր պու-  
րունկ (քօղ) առած զլստուն վրայ՝ կամ առանց  
այդ քօղին՝ մասնաւոր արարողութիւններով  
ամէնուն ձեռքը կը պագնէ, հիւրերուն կը  
սպասարկէ, կարմիր գինին ու կեղուած (կե-  
ղեւը հանուած) նուշը կամ ուրիշ պտուղներ  
կը մատուակէ: Տեղական երգն ու նուագը  
կ'ոգևորեն հիւրերը որ կը մոռնան քուն ու  
հանգիստ, և առտուան դէմ է որ նուագա-  
ծուներուն առաջնորդութեամբ առն կը վե-  
րադառնան: Այդ խրախճանքի գիշերուան մէջ  
և ուրիշ տանն ալ առանձին այցելութեան  
միջոցին, ներքի է երկու նշանածներուն՝ միս  
մինակ դանուիլ և... վաղեմքներ ունենալ,  
աւելի կամ նուազ չափով ու կշիռով:

Ասոր հակառակ, դաւառներ ալ կան ուր  
նշանածները խաղառ չեն կրնար զիրար տես-  
նել՝ առանց ծանր բամբասանքի առարկայ  
ըլլալու: Նոյն խի փողոցը եթէ իրարու հան-  
դիպին, մանչը (լսած եմ ասանկ դէպքեր)  
ճամբէն կը շեղի կամ ետ կը դառնայ՝ զիմա-  
ցէն եկող իր զոքանչն ու նշանածը չտեսնե-  
լու համար: Հարսնիքէն ետքն ալ շատ եր-  
կար տարիներ նոր փեսան ու հարսը իրարու  
երես չեն տեսներ, ուրիշին ներկայութեան, և  
հարսը դժուարաւ կը վարժուի գիշերները  
խոր մութէն առաջ (և առանձնութեան մէջ՝  
բնականաբար) իր երեսը բանալ իր տղամար-  
դուն առջև:

Անշուշտ հայ տարրին ուրիշ աղբերու  
հետ չ'իտելով՝ անոնց մէ առած օրինակը ա-  
ռաջ բերած է այս հակառակայ սովորու-  
թիւնները: Պէտք է ելլել շատ հին ժամա-  
նակներու բարբերուն՝ բնատոհմիկ նկարա-  
զիրը գտնելու համար:

Հիմա, դաւառի դրողները թող այս ա-  
ռաջին պարագան ուսումնասիրեն իրենց մի-  
ջավայրին մէջ: Յետոյ կը ցուցակադրենք թէ  
որ դաւառներ մէկ ծայրն են և որո՞նք միւ-  
սին: Ասով երեւան պիտի գայ ոգին վաղեմի  
քաղաքակրթութեան—որ ցայսօր անկոխ դե-  
տին մըն է մնացած:

\* \* \* Զեռք առնելով երկրորդ պարագան՝  
այն է որ և է տարիքի մէջ սեռական չար-

տօնուած (?) յարաբերութիւններու խնդիրին՝  
—առանց այլ և այլի, առանց հերքուելու  
երկիւղի, կրնայ ըսուիլ թէ ամէն ատեն դո-  
յութիւն ունեցած է՝ սկսեալ վաղկատուն  
ցեղերէ, երկու տնւոր զիւղերէ մինչեւ բաղ-  
մամարդ կեղերներ: Սեռական կիրքը՝ զար-  
գացման և քաղաքակրթութեան ի՞նչ աստի-  
ճանի վրայ ալ դանդախ՝ ընդամին ու բնական  
է մարդկային երկու սեռերուն համար, և  
զիրենք համեմատութեան պատուարին մէջ  
պահող շարժասկիւթներն են՝ որքան բնածին  
պաղկատութիւնն ու պատիւի դադափարը,  
նոյնքան ալ զգացումի աւելի կամ նուազ  
չափը: Չմոռնանք թէ ընկերական և ընտա-  
նական նկատումներ, բամբասանքի առարկայ  
ըլլալու, գայթակղութիւն հանելու երկիւղը  
շատ ուժեղ թումբեր են զսպելու համար կիր-  
քը այդ թէ կին սեռերուն մէջ և զիրենք  
պատուաւոր (?) ու զգուշաւոր ընելու: Մարդ-  
էակին հոգեբանութիւնը չճանչնալ է՝ ասոր  
հակառակը փաստաբանել: Գաւառական կեան-  
քին հոգեբանութիւնն ալ պատճառ չկայ բա-  
ցառութիւն նկատելու տիեզերական օրէնքին  
մէջ: Այս բանը, սակայն, չի վիճեր դաւա-  
ռի հայ կնոջ համբաւեալ համեմատութեան  
և հաւատարմութեան չէնքը: Պարկիշտու-  
թիւնը, ամօթխածութիւնը, ընտանեկան  
պատուի նախանձախնդրութիւնը դաւառի  
հայ կիներուն մէջ շատ կորուլի պաշտպան-  
ներ ունին՝ ատ անուրանալի է: Շատ ստուար  
է թիւը հայ կիներուն որո՞ք զգաստիկ բար-  
քերու ծայրայեղ տխրարն եղած են և եր-  
կար տարիներով իրենց ամուսնին կարօտը  
քաշած, բայց միշտ հաւատարիմ մնացած են  
ամուսնական ուխտին: Բայց Շահարիկի յիշին  
պարագան անսովոր չէ կին արմատին համար  
ո՛ւր որ ալ գտնուի ան, և ո՛ր դարու և ինչ  
պայմանի մէջ ալ ապրի: Զենք կրնար սլն-  
դել թէ բոլոր Հայունքները մէյմէկ Հռիփսի-  
մէներ են: Բայց դիտենք թէ Հռիփսիմէ ի-  
րեն արժանաւոր յաջորդներ չառ ունեցած է:

\* \* \* Վերջացնելէ առաջ, և հայ ժողովրդ-  
դադրութեան համար այս առիթէն օգուտ մը  
ծնցնելու նպատակով՝ կ'առաջարկենք որ դա-  
ւառի գրողներ աս երկրորդ պարագան ալ

նկատի առնեն, քննեն և ցուցակագրեն. պէտք չունին վերացական տեսութիւններ, ընկերական բարձր խնդիրներ պրպտելու և խորհրդածելու: Պարզապէս՝ եղելութիւնները, սիրահարական դէպքերը որքան որ լսած են՝ թող տեղեկագրեն՝ որոշելով դերակատարներուն քաղաքացիական, ընկերական և ընտանեկան դիրքը: Կրնան—և պէտք մըն է ափիս—զանց ընել անունները, ինչպէս ըսինք վերը, խնդիրը ամէն անձնականութենէ զերծ պահելով: Եւ աւելի որոշ եզրակացութիւններ ու ճիշտ վիճակագրութիւն ձեռք բերելու համար, պէտք է զանազանել սովորական ժամանակներն ու բացառիկ դէպքերը, օրինակի համար Լեւայ կիճեռու դիպուածական պարագան որուն վերաբերեալ Առաջնորդական Տեղեկագիրներուն վերլուծումն էր Օրմանեան Ս. Պատրիարքին վերջընթեր գրաբար կոնդակը: Հոն՝ խնդիրը ամուսնութեան և ապրուստի շուրջը կը դառնայ, պանդխտութիւնն ու ընտանեկան կեանքը կը շօշափէ, թէեւ աս պարագային ալ անշուշտ զեղծումներն ու մրծողնէական դէպքերը աւելի համեմատութիւնս ներ առած և բարքերու ապականութեան մղած ըլլալու են:

Ահա, ուրեմն, շահեկան ու առատ նիւթ որքան դաւառի գրողներուն՝ նոյնքան ալ խմբագրութեանց համար: Իրողութիւններու այդ հրապարակումէն ետքն է որ ընկերաբանն ու ազգագիրը (ethnographe) պիտի կրնան ընել բարացուցիչ ուսումնասիրութիւններ և հետեւցնել բարոյական դասեր փողովուրդի ամէն խաւերուն համար:

ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

Վաղը, Կիրակի, ժամը՝ 8/ն (Բ. Թ.), Պայպը—Հաւուր մատրան մէջ պիտի կատարուի հանգուցեալ Վեր. Ա. Կ. Պետրիկեանի (Գիտակ) մահուան տարեդարձին առթիւ յիշատակի պաշտօն մը: Տր. Ճ. Բ. Կրին, Տր. Հ. Ս. Պարնըմ, Վեր. Յ. Գ. Գրիգորեան և Բրոֆ. Յ. Հ. Ճէճիգեան հրաւիրուած են խօսիլ:

## ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԲԺՅՎՈՒԹԻՒՆ

ԸՆԿՈՅՉ ԵՒ ԱՂԲԱՏԻՆ ՄԻՍԸ

Անոյ իբրեւ ցոյց

Ա.

Մարդս կ'ապրի ոչ միայն օդով, այլ առողջ ապրելու և հիւանդ չըլլալու համար՝ կերակուրներու ալ պէտք ունի: Մարդս կը քաղէ իր կերակուրները երկրէն, ուր կը գտնուին առատօրէն, օդին մէջ ապրող թռչունները, անտառներու, դաշտերու մէջ ապրող անասունները, գետերու, ծովերու մէջ ապրող ձուկերը, պարտէզներու մէջ մշակուած ծառերուն պտուղները, բանջարանոցներուն մէջ բուսած կանանչեղէնները, արտերու մէջ սերմանուած ցորենը և այլն: Այս ամէն տեսակ մանդական տարրերն ունենալով հանգերձ՝ մոռնալու չէ թէ մարդուս առողջութեան վնասարեւ հաղարաւոր տարրեր ալ կան, ինչպէս օդը կը պարունակէ ածխային թթու կոչուած թունաւոր կաղը, գետինը կը պահէ թունաւոր բոյսեր և այլն:

Ուստի մարդ իր բանականութեամբն առաջնորդուելով, պարտաւոր է ընտրել իր կենաց ու առողջութեանը օգտակար եղողն և զգուշանալ վնասակարէն, հետեւաբար ամէն ոք պարտաւոր է սովորիլ առողջութեան ու կենաց պէտք եղածը. ինչո՞վ մարմինը կորովի կրնայ ըլլալ, և ինչպէ՞ս կրնայ չարքաշնալ. ընդհակառակը, ի՞նչ պէտք է ընել հիւանդ, ցուադար չըլլալու, մէկ խօսքով՝ կանխահատ մահով չի մեռնելու համար:

Իրաւ է որ մարդուս խելքը բարձր է, բայց խելքը իր պաշտօնը, դորձը կատարելու կարող ըլլալու համար՝ մարմինին հետ ներդաշնակ ընթանալու է: Միտքը դորձիք մըն է, ինչպէս մարմինը, որ պէտք ունի իր պարտաւորութիւնները կատարելու. մարմինը մտքին բնակարանն է: Թէ որ աւերակ ու խարխուղ տնիկ մը և հաստատ ու ամուր

տուն մը բնակելուն մէջ անհուն տարբերութիւն մը կայ, նոյնպէս ալ խիստ կարեւոր է մարդուս խելքին համար դիտնալ, թէ մարմինը կորովի ու առողջ կամ հիւանդ ու ցաւազար է: Խելքին համար նպաստաւոր է կորովի ու առողջ մարմինի մը վարձակալ ըլլալ: Յաւալի պիտի ըլլայ, երբ մարմինը սրկար ու հիւանդ ըլլայ. ուստի մարմինը, բնակարաններուն ամէնէն արտասովորն ու սքանչելին ըլլալով, առողջարար ուսելիքներով անանելու է. այս պայմանով հաստատու է դիմացկուն ըլլալով, միտքն ալ հանդիստ կ'ապրի:

Օրինակով մը բացատրենք:

Ենթադրենք, թէ ճարտարապետ մը, միեւնոյն յատակագիծով, միեւնոյն մեծութիւնով ու ձեւով երեք տուներ շինէ, ամէն մէկ տան համար տարբեր սրահով շինուած իւր թեր գործածելով:

Առաջին տան համար, ամենաընտիր քար, անխառն աւազ, առաջին տեսակ կիր ու չոր տախտակ գործածէ, և առաւօտէն մինչեւ երեկոյ գործաւորներուն վրայ հսկէ. տարակոյս չկայ թէ այս տունը հաստատ, դիմացկուն և ամէն փոթորիկի տակաւու կարող պիտի ըլլայ:

Երկրորդին համար աղէկ քար, աւազ, կիր ու տախտակ գործածէ և ամէն օր մէկ երկու ժամ միայն գործաւորներուն ղրուխը կենայ. այս երկրորդ տունն ալ հաստատ ու կայուն պիտի ըլլայ, բայց առաջինէն քիչ մը պակաս տարիներ պիտի դիմանայ:

Փալով երրորդին, վար տեսակ քար, հողով խառնուած աւազ և ստորին կիր գործածէ, և բնաւ հոգ ու խնամք չտանի գործաւորներուն. այս տունն ալ, իր արտաքին ծիւղածովն, աչքի հաճելի ու սիրուն կ'երեւայ, և անոնք որ չեն տեսած գործածուած նիւթերը և կառուցման եղանակը չեն դիտած, պիտի ըսեն թէ, այս երեք տուներն ալ հաւասարապէս լաւ են, թէ երեքն ալ հաստատ ու դիմացկուն: Մինչդեռ, այսպէս չպիտի ըսէին, թէ որ ամէն բան տեսած ու քննած ըլլային. ստոյգը սա է թէ առաջինը պատուաբեր է ճարտարապետին, ամէնէն հաստատուն ու դիմացկունն է, տէր կամ վար-

ձակալ՝ ուրախ զուարթ, հանդիստ սրտով պիտի բնակին հոն: Երկրորդ տունն ալ բաւական տարիներ պիտի դիմանայ, վարձակալ կամ տէր գոհ պիտի մնան, բայց ինչ որ ալ ըլլայ, առաջինին չափ ոչ արժէքաւոր, ոչ ալ դիմացկուն կրնայ ըլլալ:

Փալով երրորդին, չափաւ վարանիք ըսել, թէ ստորին շինուած անիւթերով, հագստատուն տուն մը շինել կարելի չէ. քիչ ժամանակէն անբնակելի ու աւերակ պիտի ըլլայ: Ահա այս երեք տուններուն մէջ եղած տարբերութիւնը կախում ունի գործածուած քարին, աւազին, կիրին ու տախտակին լաւարմէ աւելի կամ պակաս ընտիր ըլլալէն և շինութեան ատեն ի գործ դրուած հսկողութենէն:

Այսպէս ալ մարդուս մարմինը, վերոյիշեալ երեք բնակարաններուն նման, ամենափոքր և իրարու հետ միացող սնահամար մասերէ կը բաղկանայ. ինչ որ են բարձր, աւազը, կիրը, տախտակը տան մը համար, նոյնն են ուսելիքը ու խմելիքը մարդուս համար:

Ահա կարծր կամ հեղուկ նիւթեր, որոնց մէջէն մարդ իր ընտրութիւնը կ'ընէ աղէկ կամ դէշ, ինչպէս ճարտարապետը՝ շինելիք տանը համար: Ինչ որ են անխառն աւազը, ընտիր կիրն, ամուր քարն ու չոր տախտակը տան մը համար, նոյնն են բոքակածինը, թթուածինը, չաքարը, ալիւրը, ջուրը, եւ այլն մարդուս մարմինին համար: Բոքակածինով մարդուս մարմինը կորովի և առողջ կ'ըլլայ, զոր կը քաղենք մեր կերածէն ու խմածէն: Անոնք որ բոքակածին պարունակող հարուստ անուշդ կ'ընտրեն, կորովի և առողջ մարմին պիտի ունենան, մինչդեռ քիչ բոքակածին պարունակող անուշդ առնողներն ալ կ'ապրին, բայց ճնշուկի պէս կ'ապրին, իսկ անոնք որ բոքակածին չպարունակող անուշդով կ'ապրին, տկար, նիհար ըլլալով՝ ցաւով կ'ապրին, թէ որ ապրին, զի ընդհանրապէս կախառատ մահով կը մեռնին: Հետեւաբար ուլ որ առողջ ապրիլ ու երկայնակեաց ըլլալ կ'ուզէ, լաւ ընտրութիւն ընելու է կերածին ու խմածին, մեծ զգուշութիւն ընելու է՝ առողջութիւնը խաղարող ուսելիքէ ու խմելիքէ:

Ընթերցողը անշուշտ հետաքրքիր է սովորիլ, թէ աւելի շատ բորակածին պարունակող ուտելիքները որո՞նք են: Նոյնպէս ճանշնալ այն ուտելիքները որոնք աւելի քիչ բորակածին պարունակելովն հանդերձ, բաւական պիտի ըլլան սակայն կորովի և առողջ բնակարան մը յօրինել: Ասոնց ամէնուն վրայ պիտի խօսիմ, չմոռնալով միանգամայն բնական բորակածին չպարունակող ուտելիքները, որոնք չանուցանելով հանդերձ կը ծառայեն ջիւղերը զրգուելու: Նախ և առաջ խօսինք միսին ու բանջարեղէններուն վրայ:

Բնախօսներ, տնտեսագէտներ, երկու դասի բաժնուած են, ոմանք միտը կը գոլին, ուրիշներ բանջարեղէնները կը յանձնարարեն. մինչեւ այսօր վերջին վճիռը տրուած չէ, ամէն ոք իր համոզումին համեմատ կը վարուի, ամէն ոք կ'ապրի, բայց ի՞նչքան առողջ կ'ապրի...:

Մարդս պէտք է ուտէ թէ՛ միսը և թէ՛ խոտը, բայց չափով մը, տարիքի, աշխատութեան, բնակած կլիմային համեմատ եւայլն: Անտառներուն, դաշտերուն, օդին ու ծովուն մէջ ապրող այնքան անասունները, թռչունները, ձուկերը ի՞նչ բանի պիտի ծառայէին թէոր մարդ միայն ցորեն, խոտ ու պտուղ ուտէր: Մարդուս մարմինը, մարսողական գործարանը կարող է ամէն բան ուտել և մարսել, բայց ասիկա բաւական չէ, այլ եւ սովորելով համոզուելու է թէ չի վնասուիր. ըլլայ միս, ըլլայ խոտ, երկուքն ալ օգտակար ու պէտք են, բայց կարգով, կանոնով ու չափով ուտելու է:

Թէ որ փորձը զխտութիւնը կը կանխէ, ես ալ 40ամեայ փորձառութիւնովս կը համարձակիմ ըսել թէ Աստուծոյ մեղ շնորհած ուտելիքներուն ոչ մէկը վնասակար ու անօգուտ է մարդուս, ես համոզուած եմ թէ, ուտելիքէ ծնունդ առած վնասը, չէ թէ անոնց ւեեսակին, այլ անոնց քանակին, որակին եւ պատրաստելու եփելու եղանակին մէջ որոնելու է: Ես համոզուած եմ, թէ քիչ միսեղէն և աւելի բուսեղէն ուտելու վարժուողներն աւելի առողջ կ'ըլլան, և թէ միսը, խոտէն աւելի նախամեծար չէ:

ՏՌԵԹ. Մ. Բ. ԻԻԹԻԻՃԵԱՆ

## ՇԱԲԹՈՒԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

Ձերանսերէն Սեդիկ իր երեքշաբթի օրուան թիւին մէջ հրատարակած է՝ մեր աշխատակից Միհրան Ուղուլեանի երկու ոտանաւորներուն, Անգրագարձում և Եգեթան, ֆրանսերէն արձակ թարգմանութիւնը՝ Պ. Յովհաննէս Միսասեանի կողմէ կատարուած: Այդ ոտանաւորներուն բնագիրը, ինչպէս կը յիշուի, երեւցած է Մասիսի մէջ:

—Արաբկիրի համակրելի առաջնորդը՝ Տ. Մուշեղ Ծ. Վրդ. շաբթուս սկիզբը մայրաքաղաքս հասաւ ուր պիտի մնայ երկու երեք ամիս: Այցելեց Ս. Պատրիարք Հօր և տեղեկութիւններ հաղորդեց թեմական գործերու վրայ:

—Երուսաղեմի Միաբանական Ժողովը լուսարարապետ ընտրել է՝ վանքին նախորդ աւագ թարգման Տ. Վահրամ Ծ. Վրդ. Աղարեանը, որ բաւական տարիներէ ի վեր կը վարէր Աղեքսանդրիոյ Երուսաղեմապատկան կալուածներու տեսչութիւնը և տեղւոյն հայ դպրութիւն հոգեւոր հովուութիւնը, գոհացուցիչ կերպով:

—Պրուսայի ու Պիլէճիկի առաջնորդները, որոնք երկուքն ալ մայրաքաղաքս կը գտնուին այս միջոցիս, պաշտօնի փոխանակութեան (permutation) խորհուրդ մը ունին, ինչպէս կը գրէ Արեւելի՝ Պատրիարքարանի չըջանախներուն մէջ չըջած զրոյցի մը նայելով: Տ. Յովհաննէս եպիսկ. Արշարունի թեկնածու է եղեր Պիլէճիկի առաջնորդութեան, Պրուսայի առաջնորդութիւնը թողլով Տ. Մովսէս եպիսկ. Կէօմրիւքճեանի:

—Լսեմ. Միքայէլ էֆ. Մամիկոնեան հրաժարական տուած է Բերայի Թաղ. Խորհուրդի ասեմապետութեան պաշտօնէն զոր այնքան արժանաւորապէս կը վարէր:

—Ատանայի Հայ Հռոմէականաց առաջնորդ Տ. Պօղոս եպիսկ. Թէրզեան իր պաշտօնատեղին ուղեւորեցաւ:

Արսոցաք Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ՍՐԵՒՆԷ Օրագրի

# ՀԱՅԻ ՍԱՐԻՍ

## ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՔԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանոթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաթիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները։ Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէտպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր։

ՀԱՃԻ ՍԱՐԻՍ Օսմ. չաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առաջին թիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ։

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա, Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101։

3-30



## ՌՕՍԻԱ-ROSSIA

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



#### ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

|                                                  |             |       |
|--------------------------------------------------|-------------|-------|
| Ընկերութեան զրամագլուխը՝ ամբողջապէս վճարուած     | 10,667,667  | Ֆրանք |
| 1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ ու տոկոս | 54,000,000  | »     |
| Երաշխաւորութեան գումար                           | 122,000,000 | »     |
| Ապահովագրեալներուն վճարուած գումար               | 249,400,000 | »     |

Կեդրոնատեղի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մախասան հին տեղը

Ընդհ. ԲՆՃԻՅ

Ընդհ. Գործակալ

Ա. ՀԻԻՐՄԻԻԶ

ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵԼՆ

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴԸ ՆԻ ԻՐ ՑԵՂԸ, հեղ. ԲրոՅ. Ա. Ալպրեկսը, Թարգմ. Մ. Կ. Նազիկեան հեծ. Սեռային առողջաքանութեան կարեւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող սոյն ժողովրդական գիրքը երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ Ե. Մատթէոսեան տպարանէն։ Դին 5 շրջ։ Վաճառման կեդրոնատեղին է Պալենց գրասուն Կ. Պոլիս։

ԳՐԱԴԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ անգլիէրէնէ հայերէն, որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ուսանողներու, ճամբորդներու եւ առեւտրական գործով զբաղողներու համար։ Դին 8 շրջ։ Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով։ Կեդրոնատեղի Սաքաեան տպարան, Կալաթա։

ՄԱՌՇ ՎԼԻՌԱՆՏԱ, դաշնակահար Ահարոն էֆ. Մըսըրլեանի հեղինակած սոյն նուագատեղը կը ծախուի «Անտէլիպ» վաճառատունը՝ Պանձէ-Դարու եւ Ղալաթիա, Բոմէնտին կէր եւ Բրիտիտիս ի Բերա, եւ Սկիւտար հեղինակին բնակարանը։

# Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

## Հ Ի Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

|                                    |                |     |
|------------------------------------|----------------|-----|
| Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շնասք | 240,000,000    | Քր. |
| 1899ին գանձուած ապահովագրին        | 19,500,000     | »   |
| Դրամագլուխ եւ պահեստ               | 105,000,000    | »   |
| Ապահովագրեալ գրամագլուխ            | 18,000,000,000 | »   |

## Կ Ե Ն Ս Ց Զ Ի Ի Ղ

|                                    |             |     |
|------------------------------------|-------------|-----|
| Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շնասք | 99,000,000  | Քր. |
| Ընթացիկ ապահովագրութիւնք           | 253,000,000 | »   |
| Դրամագլուխ եւ պահեստք              | 150,000,000 | »   |

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Խնդիրն» ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԻ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ ԹԵԱՆ ԲՈՎ.

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեռով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով իւնիօնի ապահովագրուողք ՁԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաշխման (accumulation des bénéfices) ՅՈՒՐԻ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան իրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրեր Օղլու

Մասնաճիւղ՝ Դալաթիա, Ինայէթ Խան, գործակալ Միհրան Էֆ. Դաւիթեան:

Գործակալութիւնք Թուրքիոյ զլիաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱՏԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵԴՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՌՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Ջրանեան աբաղքման

Պալպալեան ամէն օր աղուայի ամէն տեւա՛կ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիշերուն ո եւ է ժամուն կալելի է դիւել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած աղուաները: Յարեկները աղուայ քալել տալու համար ուր վաճառք մը կ'այլ. քալել տուողին կամքէն կախեալ է:

Աղբասներուն ձրի

## “ AU TALON D'OR ” Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՁԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱՂՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կալաքա, Վոլվոնա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ շինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

# Կ. Յ. ՏԵԹԵՄԵՆՉԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանանք վաճառականական պիտոյից, սպագրական գործերու պատրաստութեան հոգը.

Գին ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% զեղչ.

Ծանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ Յ. ՏԵԹԵՄԵՆՉԵԱՆ  
ՍԱՄՍՈՆ

# ՖԵՆԻԿՍ ԷՍԲԱՆԵՕԼ

Ա.ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԸ.

Հրդեհի եւ Կեանքի Ի ԲԱՐԻՁ


Դրամագլուխ՝ 63,228,000 ֆրանք: Դրամա-

տուն Ի Կ. Պոլիս՝ Բրէտի Լիօնէ

Դեր-Գործակալ Կ. Պոլսոյ ճիւղին

ՔԱՌԼՕ ԱՀՆԱՄԵԱՆ

Կալաքա, Վոյվոսա փողոց Թիւ 103



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենեկայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

## Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ճեմքի, Իսթի ու Եսթի եւ Ճեմքի միանգամայն մեկնումներ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմյան Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՌԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱՆԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարտեքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱՐԻՏԱՐ

Չարչը Պոլսու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղազլուի տունը:

# ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ . ԹԱԳ . ՍՈՍՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԴՐ . ԸՆԿ .

Հոդեմի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԹԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԴՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԶՈ

## ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր . Ընկ . ընդդեմ հրդեհի (Ի ԲԱՐՔԱՉԷՆ)

## ԱԼԼԵԱՆՑԱ

Մովային ապահովագր . Ընկ . (Ի ձՆՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Բուէսի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Դրասենեակ , Պոլիս , Հանօբուլօ խան , Թ . 52-53-54-55-56

### ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱՐԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց  
(Վկայեալ Բացիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարեալ գործեալ գրութիւններով :

Բարիզի, Նանսիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (Էֆրսքերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ. Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա, Թարլա Պաշը, թիւ 136 :

Մանօր . — Հիւանդներ կ'ընդունին ամէն օր կէս օրէն վերջը իւր բնակարանին մէջ, ժամը 1-4 (Ը. Ն.) : Նրեքաբթի օրերը միեւնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները :

19—20

### ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍ

Դաշնակահար օրիորդ մը, որ խիստ լաւ մէթոտ մը ունի նորաւարժները մարդկու դաշնակահարութեան, կը փափագի այցելութեամբ դաս տալ տղաներու մէջ : Դիմել՝ Մասիսի խմբագրութեան :

### HOTEL «FERAH»

### ՕԹԵԼ «ՖԵՐԱՀ»

Բրինքիւրօ, Նիզամի պողոտային վրայ, ծովահայեաց, ընդարձակ պարտէզներու մէջ : Վարձակալը, Առաքել Տերեկեան որ այնքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրածանօթ նախկին Գասպար ճաշարանը, յանձն առած է նիւթական ամէն զոհողութիւններ ընել՝ իւր բաղամթիւ յաճախորդներուն հանդատութեանը համար :

Գիները չափաւոր . լաւ եւ մաքուր սնունդ . պանդոկը բաց է ներսպական մայիս մէկէն սկսեալ :

8—10

ՏՈՔԹ. Ն. ՄԱՍԻՍ (Բերա, Թագսիմ փողոց, ք. 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ, կը դարմանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով, ստամոքսի, աղեաց, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, դաղձիական ակտերը (սիֆիլիս եւ այլն) եւ մորթի հիւանդութիւնները : Հիւանդ կ'ընդունին ամէն օր կէս օրէ վերջը :